ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

N << *ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/04*>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԿԱԹՍԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Իջևան << 19 >> դեկտեմբերի 2019թ.

Ժամը 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի վարիչ Դ. Փաշինյան

Անդամներ՝

ՀՀ Տավուշի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի առաջին կարգի մասնագետ ՝ Հ. Քլոյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա.Մանգասարյան

1. << *ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/04*>> **ծածկագրով «Կենտրոնացված ջեռուցման կաթսայի» ձեռքբերման էլեկտրոնային մրցույթի հայտերի բացումը կայացել է սույն թվականի դեկտեմբերի 19-ին ժամը 10:00-ին:**

2. Հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները և գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակիցները և նրանց տվյալները	Գնային առաջարկ առանց ԱԱՀ	Ընդհանուր գնային առաջարկ	Նախահաշվային, պլանավորված գումար
1	Կենտրոնացված ջեռուցման կաթսա (2 հատ)	***Մելքշին ՍՊԸ***/ՀՎՀՀ 07615445, ք. Իջևան, Իջևանյան 40	5030000/հինգ միլիոն երեսուն հազար/	5030000/հինգ միլիոն երեսուն հազար/	3000000 (երեք միլիոն)
		ՊՌՈ Ինվեստ ՍՊԸ/ ՀՎՀՀ 02684635, ք. Երևան, Աբովյան 66, բն.10	4000000/չորս միլիոն/	4000000/չորս միլիոն/	
		ՇԵՆՏՈՒՆ ՍՊԸ/ՀՎՀՀ 06940806, ք. Վանաձոր, Ազատամարտիկների 27	3990000/երեք միլիոն ինը հարյուր իննսուն հազար/	4788000/չորս միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար/	

3. Մրցույթի հայտերի գնահատման ժամանակ արձանագրվել է հետևյալը.

ա.Մասնակից ***ՊՌՈ Ինվեստ ՍՊԸ-ն*** հրավերով նախատեսված Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի համար նշել է <<կամ համարժեք>> արտահայտությունը, որից պարզ

չի դառնում, թե մասնակիցը կոնկրետ ինչ ապրանք է մատակարարելու, անհրաժեշտ է ներկայացնել հստակ ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ, արտադրողի անվանում և տեխնիկական բնութագիր:

բ.Մասնակից ***ՇԵՆ ՏՈՒՆ ՍՊԸ-ն*** հրավերով նախատեսված Հավելված 1.1-ով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը լիարժեք չի արտացոլում հրավերով սահմանված պահանջները:

4. Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային պլանավորված գինը: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի բ/ենթակետի համաձայն մրցույթի մասնակիցները հրավիրվում են միաժամանակյա բանակցությունների ներկայացված գնային առաջարկների նվազեցման շուրջ, բանակացությունը կկայանա սույն թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին, ք. Իջևան, Սահմանադրության 1 հասցեում, 1-ին հարկ՝ ֆինանսական վարչություն: Բանակցությունը կտևի 1 ժամ:

5. Վերը նշվածով պայմանավորված *ՀՀՏՄ-ԳՀԱՊՁԲ-20/04 ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստը կասեցնել, սույն արձանագրության պատճենը ուղարկել մասնակիցներին՝ էլեկտրոնային եղանակով և ծանուցել բանակցության վարման մասին:*

6. Հաջորդ նիստը կկայանա բանակցության օրը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Փաշինյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Քլոյան

Ն. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մանգասարյան